



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 02/2

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2020 թվականի փետրվարի 17-ից

ԳՅՈՒՏԵՐ.....	4, 62
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....</i>	<i>6, 64</i>
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ.....	9
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին.....</i>	<i>11</i>
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին.....</i>	<i>55</i>
ՑՈՒՑԻՉՆԵՐ.....	57
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	59
ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ.....	66

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 3
Հեռ. (011) 597-534 հայտերի ընդունման բաժին
Հեռ. (011) 597-535 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной собственности с 1995г.

Ереван, 0010, Площадь Республики, Правительственный дом, 3
Тел. (374 11) 597-534 отдел приема заявок
Тел. (374 11) 597-535 отдел информационно-технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 62
Сведения о выданных патентах.....	6, 64
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	9
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания.....	11
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	55
УКАЗАТЕЛИ.....	57
СООБЩЕНИЯ.....	59
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	66

CONTENTS

INVENTIONS.....	4, 62
Information on granted patents.....	6, 64
TRADE MARKS.....	9
Information on registered trade marks and service marks.....	11
Information on renewal of effect of trademark registration.....	55
INDEXES.....	57
REPORTS.....	59
TWO-LETTER CODES.....	66

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

- 11** *արտոնագրի համարը*
- 13** *փաստաթղթի տեսակի կոդը*
A գյուտի արտոնագիր
B արտոնագրառունակության մասին եզրակացություն
- 21** *հայտի համարը*
- 22** *հայտի ներկայացման թվականը*
- 23** *ցուցահանդեսային առաջնության թվականը*
- 31** *առաջին հայտի համարը*
- 32** *առաջին հայտի ներկայացման թվականը*
- 33** *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
- 45** *գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51** *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
- 54** *գյուտի անվանումը*
- 56** *տեղեկատվության աղբյուրներ*
- 57** *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62** *ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 72** *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73** *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74** *արտոնագրային հավատարմատար*
- 85** *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86** *միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը*
- 87** *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 2020.01 (11) 3364 (13) A
A61C 17/00
A61C 5/00

(21) AM20190127 (22) 31.10.2019

(72) Հայկ Կարենի Մկրտչյան (AM), Բորիս Սերգեյի Բալասանյան (AM)

(73) Հայկ Կարենի Մկրտչյան, 0012, Երևան, Հովսեփ Էմինի 80, բն. 19 (AM)

(54) Ատամնաբուժական ուլտրաձայնային ծայրակալ

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես՝ ատամնաբուժական գործիքներին, և կարող է օգտագործվել ատամների մաքրման, բուժման և արմատախողովակների իրիգացիայի իրականացման դեպքերում:

Ատամնաբուժական ուլտրաձայնային ծայրակալն ունի իրան, դրա մեջ համառանցք տեղադրված ուլտրաձայնային թրթռումների ճառագայթիչ և ալիքատար, ճառագայթիչի և ալիքատարի մեջ կատարված կենտրոնական անցք: Ծայրակալի վերջնամասում կատարված է գործիքի սևեռման միջոց: Ալիքատարի վերջնամասում՝ դրա արտաքին մակերևույթին կատարված է ալիքատարը սևեռող բանալու համար նախատեսված ակոս: Ալիքատարի ծայրամասում կատարված է արտաքին պարուրակ և կենտրոնական անցքին համառանցք կատարված, գործիքի տրամագծին համապատասխան փորվածք: Գործիքի սևեռման միջոցը կատարված է պարուրակին ամրակցման հնարավորությամբ տեղադրված ցանգի տեսքով:

Բարձրացվում է ատամնաբուժական գործիքի ամրակցման հուսալիությունը և մաշակայունությունը, ինչպես նաև ուլտրաձայնային թրթռումների փոխանցման արդյունավետությունը, կրճատվում է գործիքի հեռացման և ամրակցման ժամանակը, 3 նկ.:

(51) 2020.01 (11) 3365 (13) A
C11D 3/00

(21) AM20180087 (22) 01.08.2018

(72) Ռուզան Բաբկենի Բայաթյան (AM)

(73) Ռուզան Բաբկենի Բայաթյան, 0054, Երևան, Նոր Նորքի 4-րդ զանգված, 2-րդ հատված 38, բն. 28 (AM), Լիդա Արշակի Սահակյան, 0014, Երևան, Նազարեթ Սուրենյան 11բ, բն. 34 (AM)

(54) Տրանսպորտային միջոցների մակերևույթների անհպումային լվացման միջոց

(57) Գյուտը վերաբերում է կենցաղային քիմիային, մասնավորապես՝ տրանսպորտային միջոցների մակերևույթների անհպումային լվացման միջոցներին:

Լվացման միջոցը ներառում է հետևյալ բաղադրամասերը, զանգված. % . նատրիումի հիդրօքսիդ՝ 12,5-14,0, անիոնային մակերևութաակտիվ նյութեր՝ 7.0-11.0, ոչ իոնաձին մակերևութաակտիվ նյութ՝ 2.0-4.0, լուծիչ՝ 3.0-5.0, կոմպլեքսազայացուցիչ՝ 3.0-5.0, կոռոզիայի արգելակիչ՝ 8.0-11.0, փրփրարար՝ 3.0-5.0, ներկանյութ՝ 0.02-0.03, հոտավորիչ՝ 0.1-0.3 և ջուր՝ մնացածը:

Ընդլայնվում է անհպումային լվացման միջոցների տեսականին, բարձրացվում է դրանց արդյունավետությունը:

Արտոնագրաունակության մասին գործակալության եզրակացությունները

(51) 2020.01 (11) 2722 (13) B

B01D 24/00

B01D 53/00

(21) AM20120093 (22) 03.12.2010

(85) 29.06.2012

(86) PCT/US2010/058948, 03.12.2010

(87) WO 2011/069097, 09.06.2011

(31) 61/266,423, (32) 03.12.2009, (33) US

(72) Ջեյմս Վ. Փեթեն (US)

(73) Րեդ Լիֆ Րիսորսիզ, Ինք. (US)

(54) Ածխաջրածին պարունակող հեղուկից մանր մասնիկների հեռացման եղանակ և դրա իրականացման համակարգ

(57) 1. Ածխաջրածին պարունակող հեղուկից մանր մասնիկների հեռացման եղանակ, ըստ որի

- պատրաստում են հատիկավոր հողեղեն նյութի զտող շերտ,

- մանր մասնիկներ ունեցող ածխաջրածին պարունակող հեղուկն անցկացնում են զտող շերտի միջով հոսքի այնպիսի արագությամբ, որ մանր մասնիկների մի մասը պահվի զտող շերտում՝ զտված ածխաջրածին պարունակող հեղուկ ձևավորելու համար, ընդ որում նշված հոսքի արագությունը պետք է լինի բավարար՝ ածխաջրածին պարունակող հեղուկի թրջող ժապավեն պահպանելու համար՝ ածխաջրածին պարունակող հեղուկի հետ հավող հատիկավոր հողեղեն նյութի առնվազն մեծամասնության վրա, և

- վերականգնում են զտված ածխաջրածին պարունակող հեղուկը զտող շերտից:

2. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով*, որ ածխաջրածին պարունակող հեղուկի անցկացումը կատարում են ածխաջրածին պարունակող հեղուկի ներմուծմամբ զտող շերտի մեջ ածխաջրածնային նյութից ածխաջրածին պարունակող հեղուկի ստացվելուց հետո:

3. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով*, որ ածխաջրածին պարունակող հեղուկը ստացված է ածխաջրածնային նյութից, իսկ հատիկավոր հողեղեն նյութը՝ միևնույն տեսակի նյութ է, ինչ որ ածխաջրածնային նյութն է:

4. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով*, որ հատիկավոր հողեղեն նյութն ընտրում են այրվող թերթաքար, բիտումային ավազ, ածուխ ներառող խմբից, և դրանց համակցություններից:

5. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով*, որ հատիկավոր հողեղեն նյութն այրվող թերթաքար է:

6. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով*, որ հատիկավոր հողեղեն նյութն ունի մոտավորապես 0,06 մմ-ից մինչև մոտավորապես 1մ միջին չափ:

7. Եղանակն ըստ 6-րդ կետի. *տարբերվում է նրանով*, որ միջին չափը մոտավորապես 2 սմ-ից մինչև մոտավորապես 1 մ է:

8. Եղանակն ըստ 6-րդ կետի. *տարբերվում է նրանով*, որ միջին չափը մոտավորապես 0,06 մմ-ից մինչև մոտավորապես 5 մմ է:

9. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով*, որ ածխաջրածին պարունակող հեղուկն ընտրում են այրվող թերթաքար, բիտումային ավազի մնացորդներ, ածուխի հեղուկացման արգասիքներ ներառող խմբից, և դրանց համակցություններից:

10. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով*, որ թրջող ժապավենի հաստությունը փոքր է 1 մմ-ից:

11. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով*, որ հոսքի արագությունը բավարար է՝ ածխաջրածին պարունակող հեղուկի հպման ժամանակը ապահովելու համար, որը տևում է մոտավորապես 2 օրից մինչև մոտավորապես 4 ամիս:

12. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով*, որ թրջող ժապավենի առնվազն մի մասի հաստությունը չի գերազանցում հավասարակշռված ժապավենի հաստությունը:

13. Եղանակն ըստ 12-րդ կետի. *տարբերվում է նրանով*, որ թրջող ժապավենի մի մասը կազմում է հատիկավոր հողեղեն նյութի ծավալի առնվազն 10% -ը:

14. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է նրանով*, որ զտող շերտն էապես անշարժ է դրա միջով ածխաջրածին պարունակող հեղուկի անցման ընթացքում:

15. Եղանակն ըստ 1-ին կետի. *փարբերվում է նրանով*, որ մանր մասնիկների մի մասի պահումը զտող շերտի մեջ տեղի է ունենում առաջին հերթին կլանման միջոցով, քան զտման:

16. Եղանակն ըստ 1-ին կետի. *փարբերվում է նրանով*, որ ածխաջրածին պարունակող զտված հեղուկն էապես ազատ է մանր մասնիկներից:
(74) Հռիփսիմե Դավթյան

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային և սպասարկման նշանների վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը
740	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) 20181957
(220) 07.12.2018

(111) 30276
(151) 12.02.2020
(181) 07.12.2028

(730) Սուրեն Խաչատրյան, Տավուշի մարզ, ք.
Իջևան, Նալբանդյան 20/2, AM

(442) 17.12.2018
(540)



(526) «DESIGN STUDIO» արտահայտությունն
ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է
սև, սպիտակ և երկնագույն գունային համակ-
ցությամբ:

(511)

դաս 42. ճարտարապետական ծառայու-
թյուններ. խորհրդատվություն ճարտարա-
պետության հարցերով, հատակագծերի
մշակում շինարարության բնագավառում.
ինտերիերի ձևավորում. արդյունաբերական
դիզայն. դիզայներների ծառայություններ
փաթեթավորման բնագավառում. հագուստի
մոդելավորում. գեղարվեստական դիզայն.
արդյունաբերական նմուշների (դիզայնի)
ստեղծման ծառայություններ. վեբ-կայքերի
դիզայնի ոլորտում խորհրդատվություն.
ինտերիերի դիզայն:

(740) Ռուբեն Մանասերյան

(210) 20190090
(220) 22.01.2019

(111) 30277
(151) 12.02.2020
(181) 22.01.2029

(730) Սոնա Մանուկյան, Երևան, Տերյան 62, բն.
49, AM

(442) 18.02.2019
(540)



(526) «Organics» բառը և «Handmade in Armenia»
արտահայտությունն ինքնուրույն պահպանության
օբյեկտներ չեն:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է բաց
կապույտ, նարնջագույն, կարմիր, խակի կանաչ
և սպիտակ գունային համակցությամբ:

(511)

դաս 3. սոսինձներ դնովի մագերի ամրաց-
ման համար. հղկաքարեր. պատրաստուկներ
գործիքներ սրելու համար. քարեր սափրվելու
համար (կապող միջոցներ). նշի յուղ. նշի օճառ.
համպար (պարֆյումերիա). պատրաստուկ-
ներ սպիտակեղենին փայլ հաղորդելու
համար. օսլա (ապրետուր). կարմիր կրոկուս
ողորկման համար. օճառներ. գործվածքների
երանգները վերականգնող օճառներ. լեղակ
սպիտակեղենի համար. էսենցիա (բնահյութ)
բադիանից. կոսմետիկական պատրաստուկներ
լոզանքի համար. օճառներ սափրվելու
համար. շրթներկ. բամբակե տամպոններ
կոսմետիկական նպատակների համար.
կոսմետիկական դիմակներ. բերզամոտի
յուղ. կավիճ սպիտակեցման համար. մաշկը
սպիտակեցնող կոսմետիկական կրեմներ.
պատրաստուկներ կաշվի գունաթափման
համար. աղեր սպիտակեցման համար. սոդա
սպիտակեցման համար. պատրաստուկներ

վացքի համար. օսլա սպիտակեղենին փայլ հաղորդելու համար. բուրավետ փայտանյութ. պատրաստուկներ բերանի խոռոչի ողողման համար, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. լաքեր եղունգների համար. միջոցներ գրիմ անելու համար. լոսյոններ մազերի համար. մետաղների կարբիդներ (հղկանյութեր). սիլիցիումի կարբիդ (հղկանյութեր). եթերային յուղեր մայրու ծառից. հրաբխային մոխիր մաքրման համար. կոշիկի քսուքներ. միջոցներ մազերը ներկելու համար. պատրաստուկներ մազերը գանգրացնելու համար. արհեստական թարթիչներ. կոսմետիկական միջոցներ թարթիչների համար. պատրաստուկներ մաքրելու կամ փայլեցնելու համար. կոշիկների խնամքի միջոցներ. մոմեր կահույքի և հատակների փայլեցման համար. փայլ տվող պատրաստուկներ (ողորկման համար). կոշիկի մոմեր. կոշիկի կուպր. մոմ բեղերի համար. մոմ մանրահատակի համար. ողորկելու մոմեր. դերձակի մոմ. եթերային յուղեր կիտրոնից. անուշաբույր ջուր (օդեկոլոն). ներկանյութեր զուգարանի ջրի համար. պահպանող բաղադրություններ կաշվի համար (փայլեցնող). կորունդ (հղկանյութ). կոսմետիկական միջոցներ կենդանիների համար. կոսմետիկական հավաքածուներ. կոսմետիկական միջոցներ. բամբակ կոսմետիկական նպատակների համար. մաքրող կավիճ. բծերը հանելու միջոցներ. կոսմետիկական մատիտներ. քսուքներ ողորկման համար. կոսմետիկական կրեմներ. վացքի սողա մաքրելու համար. սողա. մածուկներ ածելիներ սրելու փոկերի համար. մոմեր կաշվի համար. կրեմներ կաշվի համար. վացող միջոցներ, բացառությամբ արդյունաբերական և բժշկական նպատակների համար օգտագործվողների. լուծույթներ մաքրելու համար. ճարպագերծող միջոցներ, բացառությամբ արդյունաբերական նպատակների համար օգտագործվողների. պատրաստուկներ դիմահարդարանքը հեռացնելու համար. ատամի փոշիներ. կենցաղային հակադիրտեր. ալմաստի փոշի (հղկանյութ). կենցաղային հակաստատիկներ. զմռնիտի թուղթ. պատրաստուկներ լաքը հեռացնելու համար. զմռնիտի կտորներ. պատրաստուկներ զունագերծման համար. պատրաստուկներ

արծնուկը հեռացնելու համար. ժավելաջուր. նարդոսի ջուր. բուրավետ ջուր. հարդարանքի ջուր. օճառածառի կեղև վացքի համար. զմռնիտ խունկ. դեպիլյատորներ. մազահեռաց-նող մոմ. պատրաստուկներ վացքը թրջելու համար. եթերային էսենցիաներ (բնահյութեր). եթերային յուղեր. ծաղիկների էքստրակտներ (պարֆյումերիա). գրիմ. պատրաստուկներ մաքրելու համար. հիմքեր ծաղկային օճանելիքների համար. բաղադրություններ հոտավետ նյութերով ծխեցման համար (պարֆյումերա). բուրավետիչներ ամոքահունց խմորից պատրաստվող հրուշակեղենի համար (եթերային յուղեր). գաուլտերյան յուղ. կոսմետիկական վազելին. գերանիոլ. յուղեր կոսմետիկական նպատակների համար. ջրածնի պերօքսիդ կոսմետիկական նպատակների համար. հելիոտրոպին. կոսմետիկական յուղեր. հասմիկի յուղ. նարդոսի յուղ. յուղեր, որոնք ծառայում են որպես մաքրող միջոցներ. յուղեր պարֆյումերիայի և բուրավետ միջոցների համար. վարդի յուղ. հարդարանքի յուղեր. իոնոն (պարֆյումերիա). լոսյոններ կոսմետիկական նպատակների համար. հարդարանքի կաթ. սպիտակեցնող պատրաստուկներ վացքի համար. արդու-զարդի միջոցներ. հեղուկներ ապակիների, այդ թվում՝ հողմապակիների մաքրման համար. պատրաստուկներ գործվածքները կոկելու (օսլայելու) համար. անանուխի էսենցիա (եթերայուղ). դաղձ օճանելիքի արտադրության համար. կոսմետիկական միջոցներ հոնքերի համար. մուշկ. չեզոքացնող միջոցներ մշտագանգրացման համար. շամպուններ. օճանելիք. արհեստական եղունգներ. պատրաստուկներ եղունգների խնամքի համար. պատրաստուկներ պատի պաստառները մաքրելու համար. ողորկման թուղթ. ապակե հղկաթուղթ. պարֆյումերիային արտադրանք. կոսմետիկական միջոցներ մաշկը խնամելու համար. օճառներ ոտքերի քրտնելու դեմ. հղկաքարեր ողորկման համար. պեմզա (չեչաքար). շրթներկեր կոսմետիկական նպատակների համար. դիմափոշի. պատրաստուկներ սափրվելու համար. հոտազերծող օճառներ. հոտավետ (բուրավետ) նյութեր սպիտակեղենի բուրավետացման համար. սաֆրոլ. հատով օճառներ

հարդարանքի համար. սոդայի մոխրաջուր. մատիտներ հոնքերի համար. հարդարանքի (արդուզարդի) տալկ. կոսմետիկական ներկանյութեր. բլենկնայուղ ճարպազերծման համար. տերպենթինի յուղ ճարպազերծման համար. տերպեններ (եթերային յուղեր). հղկապաստառ. արդուզարդի միջոցներ քրտնելու դեմ (արդուզարդի պարագաներ). օճառներ քրտնելու դեմ. կիզելգուր ողորկման համար. անուշադրի սպիրտ (լվացող. մաքրող միջոց). նշի կաթ կոսմետիկական նպատակների համար. կոսմետիկական միջոցներ արևայրուքի համար. բուրավետիչներ (եթերային յուղեր). բուրավետիչներ ըմպելիքների համար (եթերային յուղեր). կենցաղային քիմիական գունաբացող նյութեր սպիտակեղենի համար. աղեր վաննաների համար, բացառությամբ բժշկական նպատակների համար օգտագործվողների. ներկանյութեր մորուքի և բեղերի համար. կոսմետիկական պատրաստուկներ նիհարելու համար. սոսինձներ արհեստական թարթիչների ամրացման համար. պատրաստուկներ ներկերը հեռացնելու համար. հոտազերծիչներ մարդու կամ կենդանիների համար. դեկորատիվ փոխատիպ նկարներ կոսմետիկական նպատակների համար. կապակցող միջոցներ կոսմետիկական նպատակների համար. գունազրկող միջոցներ կոսմետիկական նպատակների համար. պատրաստուկներ լվանալիս սպիտակեղենը փափկացնելու համար. պատրաստուկներ ատամների պրոթեզները մաքրելու համար. պատրաստուկներ ջրհորդանները մաքրելու համար. շամպուններ ընտանի կենդանիների համար (ոչ բուժական խնամքի միջոցներ). կոսմետիկական լոսյոններով տոգորված անձեռոցիկներ. պատրաստուկներ ատամների պրոթեզների ողորկման համար. կաչուն նյութեր կոսմետիկական միջոցների համար. սափրվելու լոսյոններ լաքեր մազերի համար. կոսմետիկական միջոցներ թարթիչները և հոնքերը ներկելու համար. հոտավետ խառնուրդներ ծաղիկներից և խոտերից. աներոզոլներ բերանի խոռոչի թարմացման համար. պատրաստուկներ չոր մաքրման համար. սեղմված օդով բալոններ մաքրման և փոշու հեռացման համար. ժել

ատամների սպիտակեցման համար. լվացող միջոցներով տոգորված ջնջոցներ մաքրելու համար. պատրաստուկներ հալվե -վերայով կոսմետիկական նպատակների համար. ժելեր մերսման համար, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. փայլ շրթունքների համար. բալզամներ, բացառությամբ բժշկական նպատակներով օգտագործվողների. չոր շամպուններ. կաչուն սպիտակներ եղունգների համար. արևապաշտպան պատրաստուկներ. եթերային յուղեր ցիտրոնից. հինա (կոսմետիկական ներկանյութ). տուփեր շրթներկի համար. պատրաստուկներ լոզանքի համար ոչ բժշկական նպատակների համար. մազերի լավորակիչներ. պատրաստուկներ մազերն ուղղելու համար. դիմահարդարումը հեռացնող պատրաստուկներով տոգորված անձեռոցիկներ. կոլագեններ (սոսնձանյութ) կոսմետիկական նպատակների համար. սպիտակեցնող շերտիկներ ատամների համար. սննդային բուրավետիչներ (եթերային յուղեր). բուսական կոսմետիկական պատրաստուկներ. ոչ բուժական մաքրող միջոցներ անձնական հիգիենայի համար. բուսական էքստրակտներ կոսմետիկական նպատակների համար. եղունգների լաքահանիչներ. շամպուններ կենդանիների համար (ոչ բժշկական խնամքի միջոցներ). պատրաստուկներ աչքերը լվանալու համար, ոչ բժշկական նպատակների համար. կենցաղային քիմիական պատրաստուկներ մաքրելու համար. բույր տարածող հոտավետ եղեգներ. կոսմետիկական միջոցներ երեխաների համար. շնչառությունը թարմացնող պատրաստուկներ անձնական հիգիենայի համար:

(740) Արա Էսզմալյան

(210) 20190131

(220) 25.01.2019

(111) 30278

(151) 12.02.2020

(181) 25.01.2029

(730) «Միմո» ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Սարալանջ 13, բն. 30, AM

(442) 18.02.2019

(540)



(511)

դաս 39. տրանսպորտային միջոցների վարձույթ:

(210) 20190366
(220) 28.02.2019

(111) 30279
(151) 12.02.2020
(181) 28.02.2029

(730) Անհատ ձեռնարկատեր Թերեզա Գրիգորյան, Երևան, Եղիշե Թաղևույսյան 12/7, բն. 25, AM
(442) 18.03.2019
(540)



(526) «գինիներ» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(511)

դաս 33. գինիներ:

(210) 20190460
(220) 14.03.2019

(111) 30280
(151) 12.02.2020
(181) 14.03.2029

(730) Արարատի կոնյակի գործարան «Ա.Կ.Զ.» ՍՊԸ, ք. Արարատ, Պուշկինի 12, AM
(442) 16.04.2019
(540)



(554) Ծավալային նշան
(511)

դաս 21. շիշ (տարա).

դաս 33. ալկոհոլային խմիչքներ մասնավորապես՝ անանուխի թրմօղի. սպիրտային մրգային լուծամզուքներ. դառը թրմօղիներ. անիսի լիկյոր. անիսի օղի. ապերիտիվներ. արակ (բրնձի կամ եղեգնի օղի). թորման միջոցով ստացված ըմպելիքներ. սիդեր. կոկտեյլներ. կյուրասո. դիժեստիվներ (լիկյորներ և սպիրտային ըմպելիքներ). գինիներ. ջին. լիկյորներ. մեղրային ըմպելիք (մեղրասպիրտ, մեղրագինի). բալի օղի. սպիրտային ըմպելիքներ. բրենդի. գինի խաղողի չանչերից. տանձի սիդր. սակե. վիսկի. սպիրտային բնահյութեր (էսենցիաներ). սպիրտային լուծամզուքներ. ալկոհոլային ըմպելիքներ, բացի զարեջրից. մրգեր պարունակող ալկոհոլային ըմպելիքներ. բրնձի սպիրտ. ռոմ. օղի. խառնակազմ ալկոհոլային ըմպելիքներ, բացի զարեջրի հիմքով ըմպելիքներից. նիրա (շաքարեղեգի հիմքով ալկոհոլային ըմպելիք). բայցզյու (չինական ալկոհոլային ըմպելիք):

(210) 20190534 (111) 30281
 (220) 22.03.2019 (151) 12.02.2020
 (181) 22.03.2029

(730) «Աբռոմիթ» ՍՊԸ, Երևան, Անդրանիկի 47, քն. 23, AM
 (442) 17.06.2019
 (540)



(526) “MEAT” բառը և “EST 2012” գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:
 (591) Ապրանքային նշանը պահպանվում է սպիտակ, բաց և մուգ կարմիր գունային համակցությամբ:
 (511)

դաս 29. մսային աղացած կիսապատրաստուկներ պաղեցված, սառեցված. կիսապատրաստուկներ, այն է՝ իշլի քուֆթա, կիկյան կոտլետ, նրբաբլիթ մսով, եփած խաշ, եփած փոր.

դաս 30. պելմեններ. խինկալի:

(210) 20190565 (111) 30282
 (220) 27.03.2019 (151) 12.02.2020
 (181) 27.03.2029

(730) Անհատ ձեռնարկատեր Վիկտորյա Թաթուլյան Աշոտի, Երևան, Աթոյան անցղ., շենք 11, քն. 1, AM
 (442) 16.04.2019

(540)



(526) Բացի «Vicky's» բառից, մնացած գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:
 (511)

դաս 35. վաճառքի ծառայություն, մասնավորապես՝ տորթերի, խմորեղենների, խմորային և այլ հիմքով ամբողջական ու հատով այլ քաղցրավենիքների վաճառք.

դաս 43. սննդամթերքի պատրաստում, առաքում, մատուցում և սեղանի ձևավորում (քեյթրինգ). մթերքից խոհարարական արձանիկների ստեղծում. սննդի և տորթերի ձևավորում:

(210) 20190566 (111) 30283
 (220) 27.03.2019 (151) 12.02.2020
 (181) 27.03.2029

(730) «Դարոյնք» ՍՊԸ, Երևան, Սևանի 86/1, 0026, AM
 (442) 02.05.2019
 (540)



(526) Բացի «Citrinella» և «DAROINK» գրառումներից մնացած բոլոր բառային տարրերը և թվերն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է սպիտակ, կարմիր, ոսկեգույն, կանաչ և բաց և մուգ շագանակագույն գունային համակցությամբ:

(511) դաս 30. կոնֆետներ պնդուկով. շոկոլադ պնդուկով:

(210) 20190567 (111) 30284
 (220) 27.03.2019 (151) 12.02.2020
 (181) 27.03.2029

(730) «Դարոյնք» ՍՊԸ, Երևան, Սևանի 86/1, 0026, AM

(442) 02.05.2019
 (540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է սև, սպիտակ, կարմիր, դեղին և շագանակագույն գունային համակցությամբ:

(511) դաս 30. թխվածքաբլիթ. կոնֆետներ. վաֆլիներ. հրուշակեղեն քաղցր խմորից, առավելապես խորիզով. կարամելներ. շոկոլադ. քաղցրավենիք. եգիպտացորենի փաթիլներ. պոմադկաներ. չոր թխվածքաբլիթ:

(210) 20190731 (111) 30285
 (220) 12.04.2019 (151) 12.02.2020
 (181) 12.04.2029

(730) Վարսենիկ Գրիգորյան, ՀՀ, ք. Գավառ, Դաշտոյան փողոց, 27 շ., բն. 15, AM

(442) 01.07.2019
 (540)

TSAR TIGRAN
 ՅԱՐ ՏԻԳՐԱՆ
 ЦАРЬ ТИГРАН

(511) դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի), այն է՝ գինիներ, օղի, բրենդի, վիսկի, լիկյորներ, թրմօղիներ, ապերիտիֆներ, թորման միջոցով ստացված ըմպելիքներ, սիդրեր, կոկտեյլներ, ջին, մեղրային ըմպելիք, սպիրտային ըմպելիքներ, սպիրտային բնահյութեր (էսենցիաներ), մրգեր պարունակող ալկոհոլային ըմպելիքներ, ռոմ, խառնակազմ ալկոհոլային ըմպելիքներ, բացի գարեջրի հիմքով ըմպելիքներից, մրգային օղիներ:

(740) Անդրանիկ Խաչիկյան

(210) 20190762 (111) 30286
 (220) 15.04.2019 (151) 12.02.2020
 (181) 15.04.2029

(730) «Ռուսարմ» ՍՊԸ, Երևան, Արմենակյան փ. 40, 2, AM

(442) 16.07.2019
 (540)



(526) «ԱԼՅՈՒՐ» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(511) դաս 30. ցորենի ալյուր:

(210) 20190775 (111) 30287
 (220) 16.04.2019 (151) 12.02.2020
 (181) 16.04.2029

(730) «Կիռա» ՍՊԸ, Երևան, Ավան Առինջ, 1 մկր., քն. 32, AM
 (442) 03.06.2019
 (540)



(526) «STUDIO» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:
 (511)

դաս 35. գովազդային ֆիլմերի արտադրություն. գովազդ. ռադիոգովազդ. հեռուստագովազդ. գովազդային գործակալությունների ծառայություններ.

դաս 41. կինոֆիլմերի արտադրություն, բացառությամբ գովազդային հոլովակների. կինոֆիլմերի ստեղծում, բացառությամբ գովազդայինների. տեսագրում. սցենարներ գրելու ծառայություններ, բացառությամբ գովազդայինի. տեսագրությունների մոնտաժում:

(210) 20190814 (111) 30288
(220) 22.04.2019 (151) 12.02.2020
(181) 22.04.2029

(730) «Գոարտ Սթուն» ՍՊԸ, Լոռու մարզ, գ. Նեղոց 1709, Թբիլիսյան խճ. 32, AM
 (442) 16.05.2019
 (540)



(526) «NATURAL SPRING WATER NON CARBONATED» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է կապույտ, բաց կապույտ և սպիտակ գունային համակցությամբ:

(511)
 դաս 32. բնական աղբյուրի խմելու ջուր:

(210) 20190835 (111) 30289
(220) 25.04.2019 (151) 12.02.2020
(181) 25.04.2029

(730) Մաջիդ Ալ Ֆուտաիմ Հայփերմարքեթս ԷլԷՍի, AE
 (442) 03.06.2019
 (540)



(526) Արաբական տառերով գրված արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:
 (511)

դաս 3. լվացող միջոցներ, բացառությամբ արդյունաբերական և բժշկական նպատակների համար օգտագործվողների. սպիտակեցնող (գունազրկող) միջոցներ կենցաղային նպատակների համար. պատրաստուկներ լվացքի համար. գունազրկող միջոցներ կոսմետիկական նպատակների համար. պատրաստուկներ լվանալիս սպիտակեղենը փափկացնելու համար. պատրաստուկներ մաքրելու համար. լուծույթներ մաքրելու համար. մաքրող միջոցներ. հատով օճառներ հարդարանքի համար. օճառներ. շամպուններ. օդի բուրավետիչներ.

դաս 16. թղթե կամ պլաստմասսայե տոպրակներ աղբի համար. թղթե սրբիչներ ձեռքերի համար. զուգարանի թուղթ. թղթե անձեռոցիկներ գրիմը հեռացնելու համար. թղթե կոսմետիկ անձեռոցիկներ.

դաս 29. պանիրներ. պահածոյացված, սառեցրած, չորացրած և ջերմային մշակման ենթարկված մրգեր և բանջարեղեն. կաթի փոշի. զեյթունի սննդային յուղ. առաջին սառը մամլման եղանակով ստացված ձիթապտղի սննդային յուղ. ապուրներ.

դաս 31. բարկահամ թարմ խոտեր. չմշակված բակլա. վարսակ.

դաս 32. մրգահյութեր. բանջարեղենի հյութեր (ըմպելիք):

(740) Արարատ Գալոյան

(210) 20190895

(111) 30290

(220) 30.04.2019

(151) 12.02.2020

(181) 30.04.2029

(730) «Մինե» ՍՊԸ, Երևան, Վահագնի թաղ., Արալեռ 6մեն, AM

(442) 16.05.2019

(540)



Our Gift to Nature

Մեր Նվերը Բնությանը

(526) «printing» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է սև, վարդագույն (C-0, M-30, Y-17, K-4), կրեմագույն (C-0, M-17, Y-38, K-1), դեղնականաչագույն (C-0, M-6, Y-48, K-16), մոխրագույն (C-9, M-9, Y-0, K-8), բալագույն (C-0, M-100, Y-41, K-7), մանուշակագույն (C-0, M-37, Y-9, K-22), նարնջագույն (C-0, M-47, Y-72, K-4) և դեղին գունային համակցությամբ:

(511)

դաս 16. թղթե տոպրակներ.

դաս 18. պայուսակներ.

դաս 21. թղթե բաժակներ. թղթե ափսեներ.

դաս 25. հագուստ.

դաս 40. պոլիգրաֆիա. տպագրություն. օֆսեթ տպագրություն. տամպոտպագրություն. մետաքսատպագրություն. տպագրություն անջրանցիկ թղթե ապարանջանների (թևնոցների), անջրանցիկ (ջրակայուն) ինքնաստսնձվող (կաշուն) թղթի, անվանաքարտերի (բեյջերի) նախապատրաստվածքների, ապակե իրերի (ապակեղենի), ասֆալտի, ավտոմեքենայի սրահի համար օդի հոտազերծիչների, ՀՀԴ (USB) ֆլեշ-կրիչների, գավաթների, բաժակների, գավաթների և բաժակների տակդիրների, գլխարկների, գնդակների, գործվածքի, դրոշների, թղթե իրերի, ժամացույցների, ինքնաստսնձվող (կաշուն) թաղանթի, ինքնաստսնձվող (կաշուն) թղթի, խտասկավառակների (CD), կաշվե իրերի, կերամիկական իրերի (խեցեղենի), հովանոցների, մանվածքեղենի (տեքստիլի), մատիտների, մետաղե իրերի, պատի, պլաստիկ իրերի, պոլիէթիլենային պլաստիկ տոպրակների, սիլիկոնային ապարանջանների (թևնոցների), տրիկոտաժե շապիկների, փայտե իրերի, փափուկ խաղալիքների և փուչիկների վրա ըստ պատվերի. նկարների, այցեքարտերի, թռուցիկների (ֆլայերների), բուկլետների, լուսանկարների, ցուցապաստառների (պլակատների), պոստերների, ծրարների, հրավիրատոմսերի, ձևաթղթերի (բլանկների), վկայականների և ազդագրերի տպագրում. լուսատպագրություն փուչիկների վրա. փորագրում. լազերային փորագրում. կնիքների և դրոշմակնիքների փորագրում. լուսափորագրում. փորագրում ՀՀԴ (USB) ֆլեշ-կրիչների, գավաթների, կաշվի, մատիտների, պլաստմասսայի, ռետինի, սիլիկոնային ապարանջանների (թևնոցների), փայտի, օրգանական ապակու վրա. կազմարարական աշխատանքներ. ասեղնագործում. վիմագրություն. երրորդ անձանց համար 3D տպագրություն ըստ պատվերի. երրորդ անձանց համար ցուցանակների, լուսային տեղեկատվական ցուցանակների, լուսային ցուցանակների, ցուցադրավահանների (ստենդների), գովազդային վահանակների,

գովազդային կոնստրուկցիաների, պատվող ցուցատախտակների, արտաքին բաններների (ձգապաստառների), նախշակադապարների (տրաֆարետների), գեղանկարի շրջանակների և լուսանկարի շրջանակների պատրաստում ըստ պատվերի. երրորդ անձանց համար գովազդային բնույթի թղթե պայուսակների, տոպրակների, լուցկու, ծածկարանների (շվաքարանների), պլաստիկ իրերի պատրաստում ըստ պատվերի. օբսիդիանե իրերի ծածկապատում մետաղացված նյութով. պլոտտերային աշխատանքներ, մասնավորապես՝ ինքնասոսնձվող (կաշուն) թաղանթի կտրում, ինքնասոսնձվող (կաշուն) թաղանթի ձևավոր կտրում, տիպերի ձևավոր կտրում. դեկոլ կերամիկական իրերի (խեցեղենի) վրա. դրոշմադրվագում. տպագրական կադապարների պատրաստում:

(740) Վահագն Պետրոսյան

(210) 20190998 (111) 30291
 (220) 14.05.2019 (151) 12.02.2020
 (181) 14.05.2029
 (730) Կալցեդոնիա Ս.Փ.Ա., IT
 (442) 16.07.2019
 (540)



(526) «Italian lingerie» արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ է:

(511) դաս 25. կանացի ներքնազգեստ.
 դաս 35. կանացի ներքնազգեստի տարբեր տեսականու հավաքում երրորդ անձանց համար (բացառությամբ դրանց տեղափոխումը), որը թույլ է տալիս սպառողներին հարմարավետ ուսումնասիրելու և ձեռք բերելու այդ ապրանքները մանրաձախ խանութների, մեծաձախ խանութների, վաճառքի փոստային կատալոգների միջոցով կամ էլեկտրոնային միջոցներով, ներառյալ՝ վեբ կայքերի կամ հեռուստաշուկաների միջոցով:

(740) Արարատ Գալոյան

(210) 20191002 (111) 30292
 (220) 15.05.2019 (151) 12.02.2020
 (181) 15.05.2029

(730) «Ստեփ գրուպ» ՍՊԸ, Երևան, Իսահակյան թաղ., 1/2 շ., բն. 55, AM
 (442) 16.08.2019
 (540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է կապույտ և դեղին գունային համակցությամբ:

(511) դաս 42. ինտերիերի դիզայն. էքստերիերի դիզայն. որակի հսկողություն:

(210) 20191003 (111) 30293
 (220) 15.05.2019 (151) 12.02.2020
 (181) 15.05.2029

(730) «Ստեփ գրուպ» ՍՊԸ, Երևան, Իսահակյան թաղ., 1/2 շ., բն. 55, AM
 (442) 16.08.2019
 (540)



(591) Ապրանքային նշանը պահպանվում է մոխրագույն և փիրուզագույն գունային համակցությամբ:

(511) դաս 37. շինարարություն. վերանորոգում. շինարարական տեխնիկայի վարձույթ. շինարարական աշխատանքների վերահսկողություն:

(210) 20191051 (111) 30294
 (220) 22.05.2019 (151) 12.02.2020
 (181) 22.05.2029

(730) Ստյոպա Սամվելի Ծառուկյան, Երևան,
 Վարդանանց փ., շ. 5Ա, տարածք 367, AM
 (442) 17.06.2019
 (540)

ԱՎՈԿԱԴՈ
АВОКАДО
AVOCADO

(511)

դաս 43. սրճարանների ծառայություններ.
 նախաճաշարանների ծառայություններ. ճաշարանների ծառայություններ հիմնարկներում կամ ուսումնական հաստատություններում. ռեստորանների ծառայություններ. ինքնասպասարկման ռեստորանների ծառայություններ. խորտկարանների ծառայություններ. բարերի ծառայություններ. սենյակների, դահլիճների վարձակալում հավաքների համար. տեղեկություն և խորհրդատվություն սննդի պատրաստման հարցերով. անձնական խոհարարի ծառայություններ:

(210) 20191131 (111) 30295
 (220) 29.05.2019 (151) 12.02.2020
 (181) 29.05.2029

(730) Էբբոթթա Լաբորըթրիզ, US
 (442) 17.06.2019
 (310) 82833/2018 (320) 10.12.2018 (330) CH
 (540)

IBERET

(511)

դաս 5. դեղագործական պատրաստուկներ երկաթի անբավարարության, ֆոլիաթթվի անբավարարության և սննդային սակավարյունության կանխարգելման և բուժման համար. դիետիկ և սննդային հավելումներ:
 (740) Անգելինա Նահապետյան

(210) 20191134 (111) 30296
 (220) 30.05.2019 (151) 12.02.2020
 (181) 30.05.2029

(730) Ալինա Սաշիկի Դավթյան, Տավուշի մարզ,
 ք. Դիլիջան, Հակոբջանյան փ., 3-րդ նրբ., տուն 8/2, AM
 (442) 17.06.2019
 (540)



ALDA

(591) Ապրանքային նշանը պահպանվում է մուգ կարմիր, կարմիր, սպիտակ, սև, նարնջագույն, դեղին և մարմնագույն գունային համակցությամբ:
 (511)

դաս 28. խաղալիքներ ընտանի կենդանիների համար. օղակներով խաղեր. խաղագնդակներ. ճոճաձիեր (խաղալիքներ). ծծակներով շերտ տիկնիկների համար. փոքր գնդակներ խաղերի համար. խաղալիքներ. կառուցելու խորանարդիկներ (խաղալիքներ). կիսակոշիկներ, դրանց ամրացված չմուշկներով. մոմակալներ Նոր տարվա տոնաձևերի համար. խաղագնդեր. բռնցքամարտի ձեռնոցներ. մականներ. օդապարուկներ. թիրախներ. զանգակներ Նոր տարվա եղևնիների համար. խաղային կոնստրուկտորներ. մանր զարդարանքներ երեկոյթների համար (ուշադրության նշաններ). վահանակներ (սպորտային ապրանքներ). պայուսակներ կրիկետի համար. խաղազառեր. սպորտային սկավառակներ. խաղալիք ատրճանակներ. անվակներ հեծանվամարզասարքերի համար. անիվներով կամ առանց անիվների պայուսակներ գոլֆի մականների համար. անակնկալներով խաղեր խաղարկումների համար. սպորտային

ցանցեր. թենիսի ցանցեր. ձկնորսական լողաններ. սպորտային որսատեգային հրացաններ. ձեռնոցներ խաղերի համար. տարողություններ խաղազաների համար. բաժակներ խաղազաների համար. չխշխկաններ (խաղալիքներ). տնային խաղեր. խաղեր. ցուցադրավահանակներ թռչող թիրախների վրա կրակելու համար. ձեռնաթիակներ (ռակետներ). խայծեր որսորդության կամ ձկնորսության համար. ձկնորսական սարքեր. ձկնորսական կարթաթելեր. մահճակալներ տիկնիկների համար. տնակներ տիկնիկների համար. խամաճիկներ. տիկնիկներ. թատերական դիմակներ. դիմակահանդեսային դիմակներ. տրանսպորտային նմուշների փոքրամասշտաբ մոդելներ. ձկնորսական կոճեր. լողաթաթեր. ձկնորսական թարփիկներ (ձկնորսական թակարդներ). լողավազաններ (խաղային և սպորտային իրեր). նետելու սպորտային հարմարանքներ. տիկնիկների հագուստ. տիկնիկների սենյակներ. սարքեր աճաբարության ցուցադրման համար. կեզլի (խաղ). հոլեր (խաղալիքներ). ինքնագլորներ (խաղալիքներ). փետրագնդակներ բադմինտոնի համար. զարդարանքներ Նոր տարվա տոնաճառերի համար, բացառությամբ էլեկտրական լամպերի, մոմերի և հրուշակեղենի. տակդիրներ Նոր տարվա եղևնիների համար. սարքեր խաղերի համար. սուսերամարտի դիմակներ. բեյսբոլի ձեռնոցներ. շարժական մասերով խաղալիքներ. տորոգաններ (խաղալիքներ). թավշե արջուկներ. գոլֆի ձեռնոցներ. թավշյա խաղալիքներ. ավտոմեքենաներ (խաղալիքներ). տրանսպորտային միջոցներ (խաղալիքներ). փոքրամասշտաբ հավաքովի մոդելներ (խաղալիքներ). փափուկ խաղալիքներ. մոդելներ (խաղալիքներ). մանրակերտներ (խաղալիքներ). խաղալիք պատկերաքանդակներ. դիմակներ (խաղալիքներ). մատրյոշկա տիկնիկներ. խաղալիք ռոբոտներ. թավշյա խաղալիքներ հարմար ծածկոցով:

(210) 20191149 (111) 30297
 (220) 31.05.2019 (151) 12.02.2020
 (181) 31.05.2029

(730) Անհատ ձեռնարկատեր Տկաչյովա Վերա Վյաչեսլավովնա, KZ
 (442) 01.08.2019
 (540)

VEOLES

(511) դաս 5. սպեղանալաթեր:
 (740) Անգելինա Նահապետյան

(210) 20191166 (111) 30298
 (220) 04.06.2019 (151) 12.02.2020
 (181) 04.06.2029

(730) Սփորթ ընդ Ֆեյշըն Մենեգմընթ Փթե. Լթթ., SG
 (442) 17.06.2019
 (540)

CYCLOTECH

(511) դաս 6. մետաղական փականքներ տրանսպորտային միջոցների համար. ականոցներ (երկաթեղեն իրեր).

դաս 8. ձեռքի գործիքներ, ներառյալ՝ պտուտակաբանալիներ (ձեռքի գործիքներ), ոչ էլեկտրական պտուտակահաններ.

դաս 9. պաշտպանական սաղավարտներ սպորտսմենների համար. պաշտպանական սաղավարտներ հեծանվորդների համար. սպորտային ակնոցներ. համակարգիչներ հեծանիմների համար. ջերմաստիճանի կաչուս ցուցասարքեր ոչ բժշկական նպատակների համար. անդրադարձիչներ (օպտիկա).

դաս 11. լուսավորման սարքեր տրանսպորտային միջոցների համար. անդրադարձիչներ տրանսպորտային միջոցների համար. լապտերներ հեծանիմների համար.

դաս 12. հեծանիմներ. բաղադրիչ մասեր հեծանիմների համար. բեռնախցիկներ հեծանիմների համար. հեծանիմների զանգեր. հետևի դիտահայելիներ. հեծանիմների օդախցիկներ. հեծանիմների անիմներ. հեծանիմների զամբյուղներ. թևեր հեծանիմների անիմների համար. կողմներ

երկանիվ տրանսպորտային միջոցների համար. գործիքների և պիտույքների հավաքակազմեր դողերի օդախցիկների նորոգման համար. պոմպեր հեծանիվների համար. հեծանիվների անվահեցեր. հեծանիվների ոտնակներ. ատամնավոր փոխանցիչներ հեծանիվների համար. հենակներ հեծանիվների համար (հեծանիվների մասեր). պաշտպանիչ հարմարանքներ հեծանիվների շղթաների և շրջանակների համար. հեծանիվների շրջանակներ. հեծանիվների ղեկեր. ծնկավոր լծակներ հեծանիվների համար. թամբեր հեծանիվների համար. պահպանական ցանցեր հեծանիվների համար. հեծանվային անվաճաղեր. հեծանիվների կանգնակներ. հեծանիվների անվակունդեր. արգելակներ հեծանիվների համար. հեծանիվների շրջա-դարձի ցուցիչներ. տափակաշարի բռնիչներ հեծանիվների համար. շղթաներ հեծանիվների համար. թամբերի պատյաններ հեծանիվների համար. շարժաձողեր հեծանիվների համար. հեծանիվների ատամնանիվներ. անխուց դողեր հեծանիվների համար. հեծանիվների դողեր. ցեխից, կեղտից պաշտպանող վահանակներ հեծանիվների համար. մանկական նստոցներ հեծանիվների համար. հեծանիվների դողերի նիպելների վրայի թասակիկներ. ղեկային կառավարման համակարգեր ցամաքային տրանսպորտային միջոցների համար, ներառյալ ղեկի թաթեր հեծանիվների համար. պատյաններ հեծանիվների համար. հեծանիվների ղեկի տակ տեղադրվող պայուսակներ. հեծանիվների խուրջիններ. հեծանիվների ենթաշրջանակներին տեղադրվող պայուսակներ. պայուսակներ հատուկ նախատեսված հեծանիվների վրա ամրացնելու համար. հեծանիվի ղեկի բռնակներ. փականներ հեծանիվների ղեկի համար. պաշտպանող միջոցներ հեծանիվի ետևի փոխարկիչի համար. պաշտպանող միջոցներ հեծանիվի շղթայի համար. դողաձածկաններ հեծանիվների համար. եղջյուրներ հեծանիվների ղեկի համար. արգելակային կոճղակներ հեծանիվների համար.

դաս 18. պայուսակներ, ընդգրկված 18-րդ դասում. թիկնապայուսակներ.

դաս 21. տափաշար և բռնակներ տափաշարի համար. թիկնապայուսակների

մեջ ներկառուցված խմելու ջրի համակարգեր, որոնք պարունակում են հեղուկի համար տարողություններ և մատուցող խողովակ.

դաս 25. հագուստ հեծանվորդների համար. տաբատների պաշտպանիչ փափուկ ներդրակներ (հագուստ հեծանվորդների համար). ձեռնոցներ հեծանվորդների համար. ձեռնոցներ (հագուստ):

(740) Արարատ Գալոյան

(210) 20191196 (111) 30299
 (220) 06.06.2019 (151) 12.02.2020
 (181) 06.06.2029

(730) «Մյուզիք հոլլ» ՍՊԸ, Երևան, Դրոյի փ., տուն 51, AM

(442) 17.06.2019

(540)



(526) «Official» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(511)

դաս 43. ռեստորանների և բարերի ծառայություններ:

(740) Անդրանիկ Խաչիկյան

(210) 20191202 (111) 30300
 (220) 07.06.2019 (151) 12.02.2020
 (181) 07.06.2029

(730) Էդկար Թորբաքչի, Երևան, Գուլակյան 80/1, AM

(442) 17.06.2019

(540)



(511)

դաս 43. սննդամթերքի պատրաստում, առաքում, մատուցում և սեղանի ձևավորում (քեյթրինգ). սրճարանների ծառայություններ. նախաճաշարանների ծառայություններ. ճաշարանների ծառայություններ հիմնարկներում կամ ուսումնական հաստատություններում. ռեստորանների ծառայություններ. ինքնասպասարկման ռեստորանների ծառայություններ. խորտկարանների ծառայություններ. բարերի ծառայություններ. խոհանոցային սարքերի վարձույթ. մթերքից խոհարարական արձանիկների ստեղծում. վաշոկու ռեստորանների ծառայություններ. «ուդոն» և «սոբա» ռեստորանների ծառայություններ. սննդի ձևավորում. տորթերի ձևավորում. տեղեկություն և խորհրդատվություն սննդի պատրաստման հարցերով. անձնական խոհարարի ծառայություններ:

(740) Արա Խզվալյան

(210) 20191225

(111) 30301

(220) 11.06.2019

(151) 12.02.2020

(181) 11.06.2029

(730) «Մաքս օիլ» ՍՊԸ, ք.Երևան, Տպագրիչների 8, AM

(442) 01.07.2019

(540)



(526) «OIL» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է կապույտ, կարմիր և սպիտակ գունային համակցությամբ:

(511)

դաս 37. տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման կայաններ (վառելիքով լցավորում և սպասարկում):

(210) 20191226

(111) 30302

(220) 11.06.2019

(151) 12.02.2020

(181) 11.06.2029

(730) «Մաքս օիլ» ՍՊԸ, ք.Երևան, Տպագրիչների 8, AM

(442) 01.07.2019

(540)



(526) «OIL» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է սև, դեղին և կարմիր գունային համակցությամբ:

(511)

դաս 37. տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման կայաններ (վառելիքով լցավորում և սպասարկում):

(210) 20191249

(111) 30303

(220) 13.06.2019

(151) 12.02.2020

(181) 13.06.2029

(730) «Արկադա քոնսթրաքշն» ՍՊԸ, Երևան, Գրիբոյեդովի 17, AM

(442) 01.07.2019

(540)



G R I B O E D O V
P A R K

(526) «PARK» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Ապրանքային նշանը պահպանվում է մուգ կանաչ, դեղին և սպիտակ գունային համակցությամբ:

(511)

դաս 36. անշարժ գույքի կառավարում.

դաս 37. շինարարություն:

(210) 20191298

(111) 30304

(220) 24.06.2019

(151) 12.02.2020

(181) 24.06.2029

(730) Միքսֆիթ Ինք., US

(442) 01.08.2019

(540)



(511)

դաս 9. անհատական սննդին վերաբերվող համակարգչային ծրագրային ապահովում և ներբեռնվող բջջային հավելվածներ նուտրիցիստիկի և այլ հավելումների անհատական չափաբաժինը և չափիչ սարքի հետ կապը որոշելու համար, որոնք թույլ են տալիս օգտատերերին նուտրիցիստիկների և այլ հավելումների անհատական չափաբաժինը պարունակող չափիչ սարքից ստանալ ըմպելիք. համակարգչային ծրագրային ապահովում և ներբեռնվող բջջային հավելվածներ, որոնք թույլ են տալիս օգտատերերին ըմպելիքների և նուտրիցիստիկների սարքերի համար ստանալ, մուտքագրել և տրամադրել տվյալներ և տեղեկություններ առողջության, ապրելակերպի և սննդի վերաբերյալ և տրամադրվող տվյալների և տեղեկատվության հիման վրա որոշել ըմպելիքի բաղադրությունը, որը պարունակում է նուտրիցիստիկների և այլ

հավելումների անհատական չափաբաժին. համակարգչային ծրագրային ապահովում և բջջային հավելվածներ, որոնք տրամադրում են օգտատերերին ըմպելիքների բաշխող էլեկտրական ավտոմատ սարքերի տեսքով անհատական սնունդ բաշխող սարքերի հեռակառավարման հնարավորություն և անհատական սնունդ բաշխող սարքերի և օգտատերերի բջջային հավելվածների և համակարգիչների միջև տվյալների փոխանցում, օգտագործելով անլար կապ նուտրիցիստիկների և այլ հավելումների անհատական չափաբաժին պարունակող ըմպելիքների բաշխումը հեշտացնելու համար. ըմպելիքների և նուտրիցիստիկների էլեկտրոնային բաշխիչ ավտոմատ համակարգեր՝ չտաքացվող կամ չսառեցվող, որոնք կազմված են նուտրիցիստիկներ և այլ հավելումներ պահպանող և ըմպելիքներ բաշխող սարքերից, որոնք պարունակում են նշված ժամանակահատվածում նուտրիցիստիկների և այլ հավելումների անհատական նախապես որոշված չափաբաժին, և համացանցով միացված են այլ ցանցերին օգտատերերի առողջության, ապրելակերպի և սննդի տվյալների հավաքագրման, ինտեգրման և մշակման համար, ինչը թույլ է տալիս սարքից ստանալ նուտրիցիստիկների և այլ հավելումների անհատական չափաբաժին պարունակող ըմպելիք. ըմպելիքների և նուտրիցիստիկների էլեկտրոնային բաշխիչ ավտոմատ սարքեր՝ չտաքացվող կամ չսառեցվող, որոնք թույլ են տալիս օգտատերերին կենցաղային և առևտրային օգտագործման համար ստանալ նուտրիցիստիկներով և այլ հավելումներով անհատական նախապես որոշված չափաբաժին պարունակող ըմպելիքներ.

դաս 11. ըմպելիքներ և նուտրիցիստիկներ բաշխող մեքենաներ, մասնավորապես՝ ըմպելիքներ և նուտրիցիստիկներ բաշխող էլեկտրոնային ավտոմատ մեքենաներ, որոնք թույլ են տալիս օգտատերերին ստանալ նուտրիցիստիկ պատրաստուկների և այլ հավելումների անհատական չափաբաժին պարունակող ըմպելիքներ կենցաղային և առևտրային օգտագործման համար:

(740) Արարատ Գալոյան

(210) 20191365 (111) 30305
 (220) 02.07.2019 (151) 12.02.2020
 (181) 02.07.2029

(730) Նինթենդո Քո., Լթթ., JP

(442) 01.08.2019

(540)

Pokémon

(511)

դաս 9. գիտական, հետազոտական, ծովային, երկրաբաշխական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, տեսալսողական, օպտիկական, կշռման, չափման, ազդանշանման, հայտնաբերման, փորձարկման, հսկման (ստուգման), փրկության և ուսուցման սարքեր և գործիքներ. էլեկտրականության օգտագործումը կամ բաշխումը հաղորդելու, միացնելու, փոխակերպելու, կուտակելու, կարգավորելու կամ վերահսկելու սարքեր և գործիքներ. ձայնի, պատկերների կամ տվյալների գրառման, հաղորդման, վերարտադրման կամ մշակման սարքեր և գործիքներ. գրանցված և ներբեռնված տեղեկակիրներ, համակարգչային ծրագրեր, տեղեկատվության գրանցման և պահպանման համար թվային կամ անալոգային դատարկ տեղեկակիրներ. առևտրի ավտոմատներ և կանխավճարով աշխատող ապարատների մեխանիզմներ. դրամարկղային ապարատներ, հաշվիչ մեքենաներ. համակարգիչներ և համակարգիչներին կից սարքեր. կոստյումներ ջրասուզակության համար, ստորջրյա սուզման դիմապանակներ, ստորջրյա լողի ժամանակ օգտագործվող ականջի ներդրակներ, քթասեղմիչներ լողորդների և սուզորդների համար, ջրասուզակների ձեռնոցներ, շնչառական ապարատներ ստորջրյա լողի համար. կրակմարիչներ. տեսախաղերի ծրագրեր տեսախաղերի արկադային ավտոմատների համար. ներբեռնվող տեսախաղերի ծրագրեր տեսախաղերի արկադային ավտոմատների համար. գրառված ծրագրերով էլեկտրոնային տեղեկակիրներ տեսախաղերի արկադային ավտոմատների համար. լիցքավորող սար-

քեր կուտակիչների համար. էլեկտրական կուտակիչներ. ականջակալներ. անձնական թվային օգնականներ (ԱԹՕ). սմարթ-ժամացույցներ. սմարթֆոններ. սմարթֆոնների պատյաններ. սմարթֆոնների ծածկոցներ. սմարթֆոնների համար հարմարեցված պաշտպանիչ ժապավեններ. խաղային գրառված ծրագրեր համակարգիչների համար. խաղային բեռնվող ծրագրեր համակարգիչների համար. ծրագրեր սմարթֆոնների համար. ներբեռնվող ծրագրեր սմարթֆոնների համար. սմարթ-քարտեր (միկրոսխեմաներով քարտեր). պլանշետ-համակարգիչների պատյաններ. մկնիկների գորգեր. ծածկոցներ դյուրակիր համակարգիչների համար. տեսախաղերի ծրագրեր օգտատերերի տեսախաղերի սարքերի համար. տեսախաղերի ներբեռնված ծրագրեր օգտատերերի տեսախաղերի սարքերի համար. գրառված ծրագրերով տվյալների պահպանման սարքեր օգտատերերի տեսախաղերի սարքերի համար. տեսախաղերի ծրագրեր ձեռքի էլեկտրոնային խաղերի սարքերի համար. ներբեռնվող տեսախաղերի ծրագրեր ձեռքի էլեկտրոնային խաղերի սարքերի համար. գրառված ծրագրերով տվյալների պահպանման սարքեր ձեռքի էլեկտրոնային խաղերի սարքերի համար. էլեկտրոնային խաղերի ծրագրեր. տեսախաղերի ծրագրեր. ներբեռնվող տեսախաղերի ծրագրեր. ակնոցներ (օպտիկա). 3D ակնոցներ. արևապաշտպան ակնոցներ. ակնոցների պատյաններ. ներբեռնվող պատկերների ֆայլեր. ներբեռնվող երաժշտական ֆայլեր. ձայնագրությունների կրիչներ. էլեկտրոնային ներբեռնվող հրապարակումներ. լուսակայված կինոժապավեններ. տեսախաղերի քարթիջներ. հիշողության քարտեր տեսախաղերի սարքերի համար. կառավարման լծակներ համակարգիչների համար, բացառությամբ տեսախաղերի համար նախատեսվածների. վիրտուալ իրականության գլխադիր սաղավարտներ. շարժական հեռախոսներ, բջջային հեռախոսներ. նրբաքուղեր բջջային հեռախոսների համար. բջջային հեռախոսների համար բեռնվող զգայապատկերներ. բեռնվող գրաֆիկական տարրեր բջջային հեռախոսների համար. մուլտիպլիկացիոն ֆիլմեր.

